**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-25/48**

ք. Երևան «16» 11 2025թ.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը՝ ի դեմս աշխատակազմի ղեկավար–գլխավոր քարտուղար Դավիթ Առաքելյանի, ով գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄԱՔՍ-ՓԱՈՒԸ» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Արմեն Մովսիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է պաշտոնական պատվիրակությունների ընդունելության համար /հյուրասիրության կազմակերպման/ ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված Ծառայությունը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության առավելագույն գինը կազմում է 4000000 (չորս միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման

արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև Ծառայությունը Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն Պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը Կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ՝ 2025 թվականի հոկտեմբերի 27-ից, և գործում է մինչև Պայմանագրի հավելված N 1-ով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը, բայց ոչ ավել, քան 25.12.2025թ.ներառյալ:

Պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի Կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.5 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով ի սկզբանե Ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները համապատասխան կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն

կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի Կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման Կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.9 Կատարողն իրավունք ունի Պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել Պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ Պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը [1]:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

---

[1] *Եթե Պատվիրատուն հանդիսանում է գանձապետարանում հաշիվ չունեցող պատվիրատու, ապա սույն կետը խմբագրվում է «վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու» բառերը փոխարինելով «բանկին վճարման հանձնարարական տալու» բառերով:*

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱԺ աշխատակազմ | ՄԱՔՍ-ՓԱՈՒԸ ՍՊԸ |
| ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19 | Գործունեության հասցե. |
| ՀՎՀՀ 00008519 | Երևան, Կենտրոն Իսահակյան փողոց 28 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | շենք, 1/3 տարածք |
| Հ/Հ 900011020089 | Բանկ՝ «Ամերիա բանկ» ՓԲԸ |
| ՀՀ ԱԺ աշխատակազմի | Հ/Հ 1570023639820100 |
| ղեկավար – գլխավոր քարտուղար՝ | ՀՎՀՀ 01541976 |
| Դավիթ Առաքելյան | Տնօրեն ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ |
| ------------------------------ | ------------------------------ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված N 1.1*
*«11» 11 2025թ. կնքված*
*ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-25/48 ծածկագրով պայմանագրի*

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵՆՅՈՒՆ՝ ԸՍՏ ԳՆԵՐԻ

*ՀՀ դրամ*

| Մենյու | Գին |
|---|---|
| ՍԱՌԸ ՆԱԽՈՒՏԵՍՏՆԵՐ | |
| Պանրի տեսականի հայկական | 2800 |
| Պանրի տեսականի եվրոպական | 6700 |
| Մսի տեսականի | 5700 |
| Ձկան տեսականի | 9000 |
| Լոբու պատե կարագով և չորիզոյով | 2100 |
| Նախուտեստների սեթ | 2200 |
| Հումուս | 1500 |
| Մութաբալ | 1500 |
| Մուհամմարա | 1900 |
| Ղավուրմա մարմարե մսից | 4900 |
| Թառափ մարինացված | 4100 |
| Սմբուկի ռոլլ | 1700 |
| Պղպեղի ռոլլ | 3600 |
| | |
| Թթվի տեսականի | 1900 |
| Թարմ բանջարեղենի և կանաչու փունջ | 2600 |
| Քամած մածուն | 1100 |
| Ռեժան | 1400 |
| Ձիթապտղի տեսականի | 2100 |
| ԱՂՑԱՆՆԵՐ | |
| Ամառային աղցան | 2100 |
| Դանդուռով աղցան | 1600 |
| Ավելուկով աղցան | 2100 |
| Կախասնկով աղցան | 2200 |
| Բազուկով աղցան | 1900 |
| Հորթի մսով աղցան | 3400 |
| Մայրաքաղաքային հորթի լեզվով | 2400 |
| Ծովատառեխ մուշտակի տակ | 2800 |
| Իշխան մուշտակի տակ | 2800 |
| Խրթխրթան սմբուկով | 2100 |
| Թաբուլե աղցան | 2200 |
| Կեսար աղցան | 3100 |
| ԱՊՈՒՐՆԵՐ | |
| Ավելուկով ապուր | 1500 |

| | |
|---|---|
| Իշխանով սերուցքային ապուր | 2500 |
| Փիթի | 2700 |
| Թանապուր չի քյուֆթայով | 1800 |
| Թանապուր | 1300 |
| Կարմիր լոբով և դդումով ապուր | 1800 |
| Բորշչ | 2300 |
| ՏԱՔ ՈՒՏԵՍՏՆԵՐ | |
| Տոլմայի տեսականի | 3500 |
| Խաղողի տերևով տոլմա | 3300 |
| Գառնի յարախ | 2600 |
| Իշլի քյուֆթա | 2700 |
| Իշլի քյուֆթա մանրածովախեցգետնով | 5700 |
| Քյուֆթա հաճարով | 3800 |
| Քյուֆթա ծովախեցգետնով եվ ռիզոտտոյով | 5700 |
| Տավարի պոչի խաշլամա | 6600 |
| Կաթնակեր հորթի խաշլամա | 8900 |
| Գառան խաշլամա | 6800 |
| Շոգեխաշած կարմրախայտ թարխունով | 7200 |
| Շոգեխաշած իշխան բանջարեղենով | 6800 |
| Իշխան ջեռոցում | 6700 |
| Ճտի տապակա | 3500 |
| Հավով չախոխբիլի | 3100 |
| Հարիսա | 2100 |
| Գառան թիակ ջեռոցում 2 կգ | 14000 |
| Տժվժիկ | 3500 |
| Սաղմոնի սթեյք շամպայնի սոուսով և ձկնկիթով | 7500 |
| ԽՈՐՈՎԱԾ ՈՒՏԵՍՏՆԵՐ | |
| Խոզի չալաղաջ | 4200 |
| Խոզի կողիկներ | 4200 |
| Խոզի փափկամիս | 4000 |
| Խոզի տեսականի | 4000 |
| Գառան չալաղաջ | 4700 |
| Գառան կողիկներ | 4700 |
| Գառան փարդա | 2700 |
| Հորթի ֆիլե | 4300 |
| Հորթի սուկի / մեդալյոն/ | 4700 |
| Կաթնակեր հորթի խորոված | 6500 |
| Հորթի շերտավոր խորոված | 3900 |
| Հավի | 2700 |
| Իշխան ամբողջական 700 գր. | 5600 |
| Ստերլետ | 6400 |
| Անգուսի քաբաբ | 2600 |
| Գառան քաբաբ | 2600 |

| | |
|---|---|
| Հավի քաբաբ | 1700 |
| Հավի քաբաբ սնկով | 1800 |
| Հավի քաբաբ պանրով | 1800 |
| Մանրածովախեցգետնի քաբաբ | 3300 |
| Գառան խորոված սեթ 4-6անձ | 31000 |
| Խորովածի տեսականի 4-6անձ | 23000 |
| Ստերլետ ամբողջական 2 կգ | 31000 |
| Հորթի լեզու | 3200 |
| ԿԻՍՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ /նախնական պատվերով/ | |
| Գոճի /6կգ./ | 85000 |
| Խոզի բուդ /6-7կգ/ | 48000 |
| Խոզի հաստ կողիկներ /4-6 անձ/ | 27000 |
| Գառան հաստ կող /4-6 անձ/ | 21000 |
| Հնդկահավ ամբողջական /4կգ./ | 21000 |
| Պիկանյա ամբողջական /3կգ./ | 45000 |
| Անգուսի կողիկներ /4-6 անձ/ | 52000 |
| Սաղմոն ամբողջական /6կգ./ | 99000 |
| Ղափամա /4-6 անձ/ | 11000 |
| ԽԱՎԱՐՏՆԵՐ | |
| Խորոված բանջարեղեն | 2000 |
| Խորոված կարտոֆիլ | 800 |
| Խորոված սունկ | 1800 |
| Ճմուռ | 1500 |
| Տնական տապակած կարտոֆիլ | 1500 |
| Կարտոֆիլի խյուս | 1500 |
| Տապակած սպանախ | 1900 |
| Տապակած բազուկի ճավ հավկիթով | 1700 |
| Տապակած սիբեխ հավկիթով | 2300 |
| Տապակած շուշան հավկիթով | 2300 |
| Տապակած կանաչ լոբի հավկիթով | 1900 |
| Կանաչիներով ձվածեղ | 1600 |
| Լոլիկով ձվածեղ | 2200 |
| Բաստուրմայով ձվածեղ | 2000 |
| Կախասնկով ձվածեղ | 2400 |
| Հաճար սնկով | 1500 |
| Սպիտակ բրինձ | 1200 |
| Կարտոֆիլ ֆրի | 1500 |
| Շիլա | 1800 |
| Արիշտա | 1500 |
| ՍՈՈՒՍՆԵՐ | |
| Խորովածի սոուս | 500 |
| Ֆիրմային սոուս սալորով | 500 |
| Մածուն / սխտոր-մածուն | 500 |

| | |
|---|---|
| Չիչխանի սոուս | 500 |
| Մոշի սոուս | 500 |
| Նարշարաբ | 500 |
| ԱՂԱՆԴԵՐ | |
| Խմորեղենի տեսականի | 1500-2700 |
| Պաղպաղակ | 800 |
| Ընդեղեն | 6000 |
| Մրգի տեսականի մեծ | 8000 |
| Մրգի տեսականի փոքր | 4000 |
| ԲԱՐ ՄԵՆՅՈՒ | |
| ՕՂԻ /50 մլ | |
| Օհանյան | 950 |
| Օհանյան այս | 1250 |
| Աբսոլյուտ | 1100 |
| Բելվեդեր | 1100 |
| Չիստիե Ռոսի | 1900 |
| Գրեյ գուս | 3000 |
| Կետել ուան | 1800 |
| Ստոլի | 1100 |
| Օնեգին | 1900 |
| | |
| Օ ԴԵ ՎԻ /50 մլ | |
| Արցախ Մալբրի 1 | 1100 |
| Արցախ Մալբրի 3 | 1800 |
| Արցախ Ապրիկոտ | 1300 |
| Արցախ Վայլդ փիըր | 1300 |
| Արցախ Կոռնել | 1700 |
| ԿՈՆՅԱԿ ԵՎ ԲՐԵՆԴԻ /50 մլ | |
| Նաիրի | 6500 |
| Վասպուրական | 4500 |
| Ախթամար | 2600 |
| Անի | 1900 |
| Երևան | 3600 |
| Դվին | 4300 |
| Ազնավուր | 13000 |
| Արարատ Apricote | 1500 |
| Արարատ Coffee | 1500 |
| Արարատ Cherry | 1500 |
| Հեննեսի XO | 13000 |
| Հեննեսի VSOP | 4900 |
| Հեննեսի Paradise | 60000 |
| ՎԻՍԿԻ /50 մլ | |
| Scotch blended | |

| | |
|---|---|
| Չիվաս Ռեգալ 12 | 3300 |
| Չիվաս Ռեգալ 15 | 5800 |
| Չիվաս Ռեգալ 18 | 7300 |
| Չիվաս Ռեգալ 21 | 18000 |
| Չիվաս Ռեգալ 25 | 39000 |
| Ջոնի Ուոքեր Բլեք լեյբլ | 4100 |
| Բալանթայս | 2700 |
| Scotch Single malt | |
| Մանքի շոուլդեր | 4500 |
| Գլինլիվիտ 12 | 4500 |
| Գլինլիվիտ 15 | 5000 |
| Գլինլիվիտ 18 | 11000 |
| Մակալլան 12 | 8500 |
| Մակալլան 18 | 25000 |
| Աբեռլօուր 12 | 5100 |
| Գլենդֆիդդիչ 12 | 5600 |
| Գլենդֆիդդիչ 18 | 8700 |
| Irish Whiskey | |
| Ջեյմսոն | 3000 |
| Ջեյմսոն Բլեք Բարրել | 4700 |
| Ջեյմսոն Քրիսթիդ | 4100 |
| Burbon | |
| Ֆոուր ռոզիս | 3400 |
| Ջիմ բիմ Բուրբոն | 3200 |
| Մեյքերս Մարք | 4000 |
| Tennessee | |
| Ջեք Դենիելս Օլդ N1 / մեղր / խնձոր | 3200 |
| ՌՈՄ / 50 մլ. | |
| Հավանա քլաբ 3 | 3000 |
| Հավանա քլաբ 7 | 4800 |
| Հավանա քլաբ / Քուբըն սփայսդ/ | 2000 |
| Զակապա 23 | 7300 |
| Բակարդի Սուփերիոր | 3200 |
| Բակարդի Բլեք | 3400 |
| Բակարդի Սփայսդ | 2100 |
| Սանտիագո դե կուբա | 3000 |
| ՏԵԿԻԼԱ /50մլ. | |
| Դոն խուլիո բլանկո | 4800 |
| Դոն խուլիո ռեպոսադո | 5700 |
| Դոն խուլիո անեխո | 6000 |
| Դոն խուլիո 1942 | 14000 |
| Օլմեկա սիլվեր | 2600 |
| Օլմեկա գոլդ | 2600 |

| | |
|---|---|
| Ալտոս Ռեպոսադո | 4200 |
| Ալտոս Պլատա | 4000 |
| Ավիոն ռեպոսադո | 6000 |
| Ավիոն սիլվեր | 5400 |
| Քլեյս ազուլ | 19000 |
| ՋԻՆ /50մլ. | |
| Բիֆիթեր | 1500 |
| Մալֆի Ռոզ | 5700 |
| Մանքի 47 | 5500 |
| Հենդրիկս | 3800 |
| Բոմբեյ սապֆիր | 2600 |
| Քնաթ Հենսեն | 5500 |
| ԼԻԿՅՈՐ/50մլ. | |
| Բեխերովկա | 1700 |
| Կահլուա | 2000 |
| Մալիբու | 2100 |
| Բեյլիս | 2300 |
| Կամպարի | 2000 |
| Ապերոլ | 2200 |
| Լիմոնչելլո | 1700 |
| Ամառետտո Լյուքսարդո | 2600 |
| ԿԱԼՎԱԴՈՍ | |
| Դոմեյն Դյուպոն | 2100 |
| Կալվադոս Պիեռ Հյուտ | 2500 |
| ԳՐԱՊՊԱ | |
| Նոնինո / Il Sauvignon Blanc grappa | 2400 |
| Նոնինո / Lo Chardonnay Aged grappa | 2400 |
| ՎԵՐՄՈՒՏ | |
| Մարտինի բիանկո | 1300 |
| Մարտինի ռոսսո | 1300 |
| Քոչչի ամերիկանո | 1600 |
| Քոչչի ստորիկո | 1600 |
| Քոչչի էքստրա դրայ | 1500 |
| ԳԱՐԵՋՈՒՐ | |
| Գերմանական | |
| Խրոմբախեր 0.33 լ | 2200 |
| ՀԲ Օրիգինալ 0.5 լ | 2700 |
| ՀԲ Վեյզեն 0.5 լ | 2700 |
| Բելգիական | |
| Ավգուստին 0.33 լ | 2500 |

| | |
|---|---|
| Ավգուստին 0.75 լ | 5500 |
| Լցնովի Գարեջուր | |
| Տեղական 0.33 լ | 1200 |
| Տեղական 0.5 լ | 1600 |
| Ներմուծված 0.33 լ | 1500 |
| Ներմուծված 0.5 լ | 2000 |
| ԶՈՎԱՑՈՒՑԻՉ ԸՄՊԵԼԻՔ | |
| Ջուր | 500 |
| Գազավորված ջուր | 500 |
| Սան Պելեգրինո | 1200 |
| Աքուա Պաննա | 1200 |
| Կոկա կոլա,Ֆանտա,Սփրայթ | 500 |
| Բնական հյութ | 800 |
| Տոնիկ | 1400 |
| Լիմոնադ | 1500/3500 |
| Թան /1լ | 2000 |
| Կոմպոտ /1 լ | 2500 |
| ԹԱՐՄ ՔԱՄԱԾ ՀՅՈՒԹԵՐ | |
| Գազարի | 1500 |
| Նարնջի | 2000 |
| Խնձորի | 2000 |
| Թուրինջի | 2000 |
| ԴԱՍԱԿԱՆ ԿՈԿՏԵՅԼՆԵՐ | |
| Դայկիրի | 3000 |
| Կոսմոպոլիտան | 2200 |
| Բլադի Մերի | 2200 |
| Մարգարիտա | 3000 |
| Ջեփենիս սլիփփեր | 2600 |
| Մոսքոու մուլ | 2200 |
| Օլդ ֆեշնդ | 3300 |
| Նեգրոնի | 2600 |
| Ապերոլ շպրից | 3500 |
| Միդորի շպրից | 3500 |
| Ջին բազիլ | 2500 |
| Վիսկի սոուր | 3600 |
| Կուբա լիբրե | 3000 |
| Պինա կոլադա | 3000 |
| Մոխիտո | 3000 |
| ՈՉ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԿՈԿՏԵՅԼՆԵՐ | |
| Մոխիտո | 2000 |
| Պինա կոլադա | 2000 |

| | |
|---|---|
| Շիլրի տեմպլ | 2000 |
| Սինդրելլա | 2000 |
| Միլքշեյք | 2000 |
| Միլքշեյք Բերրիս | 2200 |
| Միլքշեյք Բանանա | 2200 |
| Միլքշեյք Բանանա -սթրոբերի | 2200 |
| ՍՈՒՐՃ | |
| Արևելյան սուրճ | 800 |
| Էսպրեսսո | 1000 |
| Էսպրեսսո կրկնակի | 1600 |
| Էսպրեսսո տոնիկ | 2300 |
| Ամերիկանո | 1000 |
| Աֆոգատո | 1700 |
| Կապուչինո | 1400 |
| Կապուչինո -Մաչա | 1400 |
| Լատե | 1500 |
| Լատե - Մաչա | 1500 |
| Գլյասե | 1500 |
| Բամբ | 2800 |
| ՍՈՒՐՃ | |
| Դասական թեյեր | |
| Ասսամ | 1200 |
| Էրլ Գրեյ | 1200 |
| Սենչա ռոյալ | 1200 |
| Ժասմիկ | 1200 |
| Ուրց և նանա | 1200 |
| Կաթնային ուլունգ | 1500 |
| Տնական թեյեր | |
| Չիչխան և մեղր | 2800 |
| Կոճապղպեղ և մեղր | 2800 |
| Ցիտրուսային | 2000 |
| Հատապտղային | 2800 |
| SPARKLING WINE | |
| IMPORT | |
| Butterfly Prosecco DOC Rose, Millesimato, Astoria | 9600 |
| Il Fresco Prosecco DOC, Extra Dry, Villa Sandi | 10000 |
| Cremant De Bourgogne AOC, Brut, Barton & Guestier | 13700 |
| Ars Collecta Blanc de Blanc Reserva, Cava DO, Codorniu | 17600 |
| Moet et Chandon, Brut Imperial Champagne | 58000 |
| Cristal, Brut Champagne Vintage | 194500 |
| Dom Perignon, Brut Champagne Vintage | 205000 |
| ARMENIA | |

| | |
|---|---|
| Takar Extra Brut, Kangun, Charmat Method | 7200 |
| HayPetNat, Areni Rose, Methode Ancestrale | 8900 |
| Karas Extra Brut, Rkatsiteli, Charmat Method | 9200 |
| Zoe, Lalvari-Banants, Charmat Method | 11400 |
| Keush Brut, Voskehat-Khatuni, Methode Traditionnelle | 15100 |
| Keush Rose Brut Nature, Areni, Methode Traditionnelle | 18700 |
| WHITE WINE | |
| IMPORT | |
| Chablis Premier Cru AOC, Moillard, FRANCE | 23700 |
| Chassagne-Montrachet AOC, Joseph Drouhin, FRANCE | 62500 |
| Villa Antinori, Trebbiano-Malvasia, Antinori, ITALY | 8300 |
| Levarie Soave Classico DOC, Masi, ITALY | 9600 |
| Le Fornaci, Lugana DOC, Tommasi, ITALY | 13300 |
| Bramito, Chardonnay, Castello Della Sala, Antinori, ITALY | 13600 |
| Masianco, Pinot Grigio, Delle Venezie DOC, Masi, ITALY | 14500 |
| Gavi dea Gavi DOCG, La Scolca, ITALY | 20700 |
| Vulcaia Fume Sauvignon Blanc Del Veneto IGT, Inama, ITALY | 44000 |
| Faunder's Estate, Chardonnay, Beringer, USA | 12500 |
| Villa Maria, Sauvignon Blanc, Marlborough, NEW ZEALAND | 13000 |
| Saar Riesling, Mosel-Saar-Ruwer VDP, Van Volxem, GERMANY | 17300 |
| ARMENIA | |
| Arkuri Noa, Khatouni, Noa Of Areni | 7000 |
| Kouash, Voskehat, Manukyan Wine | 7000 |
| Shunch, Voskehat, Aratashen Winery | 7900 |
| Martiros, Sauvignon Blanc, Alcoteca | 7900 |
| Alexandrea, Chardonnay, Alexandrea Winery | 7900 |
| Alexandrea, Dry Muscat, Alexandrea Winery | 7900 |
| Takar, Kangun, Armenia Wine | 8300 |
| Kataro, Voskehat, Domaine Avetisyan | 8800 |
| Koor, Voskehat, Higland Cellars | 8800 |
| Karas, White Blend, Karas Winery | 9200 |
| Tus, Lalvari, Northern Terroir | 9500 |
| Noa, Voskehat, Noa Of Areni | 9500 |
| Shoror, Kangun-Voskehat, Shoror Wines | 9600 |
| Alexandrea, Riesling, Alexandrea Winery | 10400 |
| Zulal Reserve, Garan Dmak, Aimee Keushguerian | 10800 |
| Special Selection, Garan Dmak, Jraghatspanjan Winery | 11400 |
| Sapor, Voskehat, Ijevan | 11700 |
| Tariri, Kangun-Colombard-Muscat Ottonel, Armenia Wine | 15800 |
| Koor Reserve, Voskehat, Higland Cellars | 19300 |
| Oshin Reserve, Voskehat, Oshin Cellars | 19000 |
| Yacoubian-Hobbs, White Blend, Dav Canyon | 23800 |
| Kraki Ktor, Orange Wine, Kangun, Karas Winery | 24400 |

| | |
|---|---|
| Karas Reserve, Chardonnay Single Vineyard, Karas Winery | 24400 |
| Voski, Voskehat-Garandmak, Zorah | 24800 |
| ROSE WINE | |
| IMPORT | |
| Mateus The Original Rose, Sogrape Vinhos, PORTUGAL | 8200 |
| Scalabrone, Bolgheri DOC, Tenuta Guado Al Taso, Antinori, ITALY | 11900 |
| Marius Peyol, Cotes De Provence AOP, FRANCE | 13200 |
| Chateau de Selle, Cotes De Provence AOC, Domaines Ott, FRANCE | 26300 |
| ARMENIA | |
| Kouash Rose, Areni, Manukyan Wine | 7200 |
| Kataro Rose, Areni-Tozot, Domaine Avetisyan | 7600 |
| Alexandrea Rose, Pinot Noir, Alexandrea Winery | 7900 |
| Jraghatspanjan Rose, Tigrani, Jraghatspanjan Winery | 8600 |
| Karas Rose, Sireni-Syrah, Karas Winery | 9200 |
| Sapor Rose, Areni, Ijevan | 11700 |
| RED WINE | |
| IMPORT | |
| Cuve 8a Beton, Lelande De Pomerol AOC, Cateau Canon Chaigneau, FRANCE | 14500 |
| Cotes du Rhone AOC Rouge, E.Guigal, FRANCE | 17300 |
| Clarendelle By Haut Brion, Medoc AOC, Clarence Dillon, FRANCE | 30000 |
| Volnay AOC, Joseph Drouhin, FRANCE | 50000 |
| Masca Del Tacco, Susumaniello, Poggio Le Volpi, ITALY | 8300 |
| Aprimondo, Appassimento Sangiovese, Caviro, ITALY | 10000 |
| Peppoli, Chianti Classico DOCG, Antinori, ITALY | 11800 |
| Pian Delle Vigne, Brunello Di Montalcino DOCG, Antinori, ITALY | 32000 |
| Barolo DOCG, Fontanafreda, ITALY | 35000 |
| Amarone Della Valpolicella Classico DOCG, Tommasi, ITALY | 43600 |
| Tignanello, Toscana IGT, Antinori, ITALY | 71500 |
| Silk & Spice Red Blend, Sogrape Vinhos, PORTUGAL | 11300 |
| Reserva Malbec, Patagonia IG, Botega Del Fin Del Mundo, ARGENTINA | 17600 |
| Campo Viejo, Gran Reserva, Rioja DOC, SPAIN | 15000 |
| BIN 28, Shiraz, Penfolds, AUSTRALIA | 23700 |
| ARMENIA | |
| Arkuri Noa, Tozot, Noa Of Areni | 7000 |
| Kouash, Areni, Manukyan Wine | 7200 |
| Shunch, Areni, Aratashen Winery | 8000 |
| Takar, Areni, Armenia Wine | 8300 |
| Pure Carbo, Carbonic Areni, Ijevan | 8700 |
| Ariats, Areni Kes Kakhani, Gevorkian Winery | 8800 |
| Koor, Areni-Khndogni, Higland Cellars | 8800 |
| Karas, Red Blend, Karas Winery | 9200 |
| Noa, Areni, Noa Of Areni | 9500 |
| Ariats, Haghtanak Carbonic Karasi, Gevorkian Winery | 10600 |

| | |
|---|---|
| Zulal, Milar, Aimee Keushguerian | 10800 |
| Special Selection, Tigrani, Jraghatspanjan Winery | 11400 |
| Kataro, Khindoghni, Domaine Avetisyan | 12400 |
| Koomroot Reserve, Kakhet-Areni, Decanter | 13000 |
| Khachmeruk, Cabernet Sauvignon-Areni, Trinity | 13200 |
| Shoror Reserve, Areni, Shoror Wines | 13500 |
| Ariats Multi-Vintage, Areni Kes Kakhani, Gevorkian Winery | 15400 |
| Takar Reserve, Areni-Saperavi, Armenia Wine | 15400 |
| Alluria N3, Haghtanak-Karmrahyut-Khndoghni, Alluria Winery | 15600 |
| Noa Reserve, Areni, Noa Of Areni | 18500 |
| Oshin, Reserve Areni, Oshin Cellars | 19000 |
| Koor, Reserve Areni-Khndogni, Higland Cellars | 19400 |
| Syrah Reserve, VanArdi | 19900 |
| Karas Reserve, Areni-Sireni, Karas Winery | 21700 |
| Tariri, Areni-Merlot-Cabernet Sauvignon, Armenia Wine | 21800 |
| Kataro Reserve, Khindoghni, Domaine Avetisyan | 22000 |
| Karasi, Areni, Zorah | 22000 |
| Yacoubian-Hobbs, Areni, Dav Canyon | 24200 |
| Yacoubian-Hobbs SARPINA, Areni, Dav Canyon | 32000 |
| Tariri Reserve, Areni-Petit Verdot-Tannat, Armenia Wine | 38200 |
| Heritage, Sireni, Zorah | 47000 |
| Karas Grand Reserve, Red Blend, Karas Winery | 47900 |
| Yeraz, Areni, Zorah | 89000 |
| Tariri Karasum, International Red Blend, Armenia Wine | 107000 |
| DESSERT | |
| Hekiat, Sweet White Blend, Late Harvest, Wineworks, Half Bottle | 11500 |
| Souternes AOP, Chateau Du Haut Pick, FRANCE | 21800 |
| Khaluli, Pomegranate Semi Sweet | 8100 |
| Սպասարկում 10% | 389290 |
| Մենյու՝ | |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար – գլխավոր քարտուղար՝
Դավիթ Առաքելյան

-----------------------
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

ՄԱՔՍ-ՓԱՈՒԸ ՍՊԸ
Գործունեության հասցե.
Երևան, Կենտրոն Իսահակյան փողոց 28
շենք, 1/3 տարածք
Բանկ՝ «Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570023639820100
ՀՎՀՀ 01541976
Տնօրեն ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

-----------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 1*
*« 11 » 11 2025թ. կնքված*
*ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-25/48 ծածկագրով պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | Չափման միավորը | ընդհանուր առավելագույն գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը* |
| 1 | 79111200/1 | Պաշտոնական հյուրասիրությունը պետք է ներառի` Տաք և սառը խորտիկներ, Տաք ուտեստներ և ապուրներ, Տաք և զովացուցիչ ըմպելիքներ (նաև բնական), Ալկոհոլային խմիչքներ և կոկտեյլներ, Աղցաններ, խավարտներ, աղանդեր (խմորեղեն), միրգ և այլն: Ծառայությունների գինը պետք է ներառի Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը` այդ թվում նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Մասնակիցը գնային առաջարկին կից պետք է ներկայացնի նաև ընդհանուր մենյուն` ըստ առավելագույն գների, համաձայն Հավելված 1.1-ի:** Ծառայությունների մատուցումը պետք է ներառի ընկերության ենթակայությամբ գործող (առկայության դեպքում) սննդի մատուցման բոլոր հաստատությունները: | դրամ | 4000000 | 1 | ՀՀ, ք. Երևան, Խանջյան 28շ. 1/3 տարածք | Պայմանագիրը ուժի մեջ է մտնում 2025 թվականի հոկտեմբերի 27-ից մինչև 2025թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ: |

** Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը ներառյալ:*
*** Վերջնական պատվերը համաձայնեցվում է պատվիրատուի հետ:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար – գլխավոր քարտուղար`
Դավիթ Առաքելյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

**ՄԱՔՍ-ՓԱՈՒԸՐ ՍՊԸ**
**Գործունեության հասցե.**
**Երևան, Կենտրոն Խանջյան փողոց 28 շենք, 1/3 տարածք**
**Բանկ` «Ամերիա բանկ» ՓԲԸ**
**Հ/Հ 1570023639820100**
**ՀՎՀՀ 01541976**
**Տնօրեն` ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
*«11» 11 2025թ. կնքված*
*ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-25/48 ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 79111200/1 | Ներկայացուցչական ծառայություններ /4237/ | - | - | - | - | - | - | - | - | - | 4000000 | 4000000 | 4000000 | 4000000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար – գլխավոր քարտուղար՝
Դավիթ Առաքելյան

-------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

ՄԱՔՍ-ՓԱՈՒԸ ՍՊԸ
Գործունեության հասցե.
Երևան, Կենտրոն Իսահակյան փողոց 28
շենք, 1/3 տարածք
Բանկ՝ «Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570023639820100
ՀՎՀՀ 01541976
Տնօրեն ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

-------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

*Հավելված 3*
*«11» 11 2025թ. կնքված*
*ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-25/48 ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ ________________________
հվհհ ______________________

Պատվիրատու
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ________________________
հվհհ______________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«    »«          » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «    »  «          » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակցությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«11» 11 2025թ. կնքված*
*ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-25/48 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ________________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ____________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________________
ազգանուն, անուն

______________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________________
ազգանուն, անուն

______________________________
ստորագրություն

*Հավելված N 4*
*«     »          2025 թ. կնքված*
*ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-25/48 ծածկագրով պայմանագրի*

ԾԱՆՈՒՑՈՒՄ

______________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ______________________-ի և ______________________-ի միջև «--»     20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը     կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

______________-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «--------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.9 կետով սահմանված պահանջներին:

______________________________     ______________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)     ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--»     20 թ.